

Հոկտեմբերի 6-ին տեղի ունեցավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական կոմիտեի հերթական նիստը՝ ՀՖՖ Կարգապահական կոմիտեի նախագահ Ռուբեն Սինոյանի նախագահությամբ՝

ՈՐՈՇՎԵՑ՝

02/10/11թ. «Բանանց»-«Միկա» խաղին «Բանանց» թիմի ֆուտբոլիստ Գագիկ Դադբաշյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Բանանց» ֆուտբոլային ակումբին տուգանել 25000 դրամ:

02/10/11թ. «Շիրակ»-«Գանձասար» խաղին որակազրկված ֆուտբոլիստ մասհակցելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 22-րդ կետի համաձայն՝ «Գանձասար» թիմին գրանցել տեխնիկական պարտուոյուն, «Գանձասար» ֆուտբոլային ակումբին տուգանել 50000 դրամ:

29/09/11թ. «Փյունիկ-3-99»-«Ակադեմիա-99» խաղին «Ակադեմիա-99» թիմի ֆուտբոլիստ Մարկ Բախտամյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, ՀՖՖ տեխնիկական կենտրոն-Ակադեմիային տուգանել 1000 դրամ:

30/09/11թ. «Շիրակ-94»-«Ալաշկերտ-94» խաղին «Ալաշկերտ-94» թիմի ֆուտբոլիստ Յուրիկ Հովհաննիսյանի հեռացման, մրցակցին միտումնավոր հարվածելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ որակազրկել 2 խաղով, Մարտունու մարզադպրոցին տուգանել 10000 դրամ:

30/09/11թ. «Միկա-94»-«Շենգավիթ-94» խաղին «Շենգավիթ-94» թիմի ֆուտբոլիստ Նարեկ Մարտիրոսյանի հեռացման (նույն խաղում 2-րդ զգուշացման) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Ուլիս» ֆուտբոլային ակումբին տուգանել 3000 դրամ:

30/09/11թ. «Բերդ-96»-«Արտաշատ-96» խաղին «Արտաշատ-96» թիմի մարզիչ Սամվել Գևորգյանի հեռացման, մրցավարի հասցեին անվայել արտահայտության համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 20-րդ կետի համաձայն՝ որակազրկել 2 խաղով, Արտաշատի համալիր մարզադպրոցին տուգանել 10000 դրամ: